

Կոռնելիա

(Չեռամբ միով զգրոյս իւր ընդ ձորձովն ժածկեալ, և միւսովն արագապէս տարով աս որդին զբարոյնն։)

Ա՛խ, որդեակ իմ, առ, մեռի՛ր քաջարար:

Կայիոս

Ի պարգևս յայս աւասիկ՝ ես ճանաչեմ զքեզ, ո՛վ մայր.
Ի հարուածս յայս գու ծանիր զորդիդ: — (Գնայ գիտովի):

Լիկիևիս

(Ճչելով մեծաձայն՝ անկանի յերկիր կիսամեռ։)

Ո՛վ Տէր... մեռանիմ:

Թարգմ. Հ. ԱՔԱՆԱՍ ՏԵՐՈՏԵԱՆ

ՎԵՐՋ

Փ Ա Ր Ի Ջ Ո Ւ Ա Շ Ի Ա Ր Հ Ա Հ Ա Ն Դ Է Ս Ն



ԱՐՏԷՋԸ Թողով՝ հետևինք հովանաւոր ծառուղւոյն որ Գեղարուեստից Տաճարը կը հանէ կողմնակի, ուրանօր հաւարքեալ է Գաղղիոյ տաննամեայ աշխատութեան արձանաց խումբը և յետոյ նկարքն: Մանենք հետզհետէ խուզարկու աչք այն մանր սենեկաց շարքը, որոց իւրաքանչիւրն արուեստաւորի մը մասնական ցոյցն կը բովանդակէ: Անհամար թուով գողտրիկ և հսկայ արձանաց վրայ գչիրն կարծես վրձնոյն հաւասար փափկութեամբ իւր զգացման հետքը թողած է: Անկենդան գածն և կուճն աստ նոյն կենդանութեամբ՝ թռչնոյ բոյնը բռնող անմեղ տղու մը գէմբը կը ներկայացունէ քեզ. և ապա քիչ մ'անդին, որսորդի մը օրհասական տագնապը՝ յանկարծօրէն մօտ արջու մը ճիրանաց մէջ ըմբռնուած՝ անոր ձագը սպաննած ըլլալուն համար: Նիւթք անթիւ են. առասպելական, զիցարանական, կենսագրական, փոփոխակի զուարթ և տխուր արձանաց մէջ շրջե-

լով, անզգալապէս կը յառաջեա կեդրոնական Գմբեթին (Dome Central) հազար վեց հարիւր թուով արձան, նկար, փորագրութիւն և գծագրութիւն անյազարար գիտելէ վերջ, կանգ առնելով երբեմն արձանի միոյն առջև՝ գործուածքին փափկութեան և թափանցկութեան վրայ զարմանալով, նկարի մը երանգոց ճշգրտութեան, կամ նիւթին նորութեան վրայ խորհրդածելով. երազաբար շրջելով մտաբերբեմն բնութեան գեղեցիկ տեսարանի մը վերայ, ծովային՝ անվերջ հորիզոնով պատկերի մը արևելքը կամ՝ ոսկեծայր արևմուտքը, և իւր անդրադարձութիւնն՝ ՚ի ջուրս նաւու հետոց հետ խառնուիլը գիտելով, ծաղկանց և պտղոց սապառք, գիցուհեաց կերպ կերպ առասպելաբանութիւնը, և կամ պատերազմաց ահեղ խառնուրդներ տեսնելով, և խիստ քիչ նկարներ գտնելով՝ որ ՚ի թանգարանաց փոխ առնուած ըլլան այս սրահքս զարդարելու համար:

Անդին ուրիշ համահաւասար և զուգահեռական սրահ մի կայ, զոր հարկ է ևս հետազօտել. աստանօր մարդուս ջանից և վաստակոց պատմութիւնը կը ներկայանայ քեզ: Անյիշատակ ժամանակէ հետէ, երբ մարդկային ազգն իւր մանկութեան մէջ էր դեռ ևս, և ստիպուած էր իւր հանճարովն բնութեան և հողոյն դէմ մաքառել, այն օրէ՛ երբ երկու փայտ իրարու շփելով իւր կրակը կ'արծարծանէր, և առաջին երկաթէ գործին կը յարմարցնէր հողը մշակելու համար. երբ առաջին անգամ անպատմելի ուրախութեամբ կենդանի մը կը սանձէր՝ իրեն ծառայեցնելու, և հետզհետէ բնութեան գաղտնեաց խելամուտ կը լինէր՝ իր գոյութիւնը աւելի ազնուացնելու և կենաց հանգրստութիւնը վայելելու համար. երբ այլ ևս ստիպուած չէր կաշեսյ զգեստը հագնելու, այլ իբրև թագաւոր բնութեան՝ որդէ մը մետաքսի թեղն կը հանէր՝ պերճութեան և շուայլութեան կերպարանք մի տալով ինքեան. միով բանիւ՝ երբ սկսած է ամենաբնական և պարզ կեանքէ, մինչև այն օրը՝ յորում նրբագոյն և բազմամանուած գործին գտած է, ժամանակագրական կարգաւ աչքիդ գիմաց կը պարզուի, և ականայ կամօք կը թողուս այդ հետաքրքրական արձանաց սրահը՝ ուրիշ մը մտնելու համար, որ և՛ս մեծագոյն է, և ուր՝ Ա. Ազատական արուեստը, Բ. Ազգագրական և մարդաբանական գիտութիւնք, Գ. Հասարակ արուեստք, Դ. Տեղափոխութեան և շարժման միջոցք և գործիք, Ե. Զինուորական արուեստք, երկարօրէն և մանրամասնաբար ներկայացած են:

Ազատական արուեստից մէջ նշանաւոր տեղի բռնած է քաւտրոնն, Հնոց և այժմու թատերական դրութիւնն, զարդերն, մեքենայքն, հանդերձանքը, ճարտարապետութիւնն և հուշակաւոր գերասանաց նրկարքն. աստ կը ցուցուին քեզ: Ուրիշ սրահի մը մէջ գործնական Պատկերաձանաչիւնն իւր ամէն ճիւղերով յերևան կ'ենէ, սկսեալ պարզ և մատիտով գծագրութենէն և որմանկարէն մինչև ՚ի ջրաներ:

կըն և յիւզաներկն արդի գիւտերօրն և գործեօքն: Կը յաջորդէ ապա Արձանագործարհունն, ուր կը ցուցուի զչիրին գործածութիւնն՝ զգացուցները տպաւորելու համար 'ի փայան և 'ի կուճն, 'ի քարն և 'ի պըղինձն, 'ի մոմն, 'ի փղոսկրն և ամենայն կարծր նիւթի վրայ, այս արուեստին ժամանակաւ կրած փոփոխութեամբն, հնոց և նորոց դարուց մէջ: Երաժշտութիւնը՝ մարդու հաճոյագոյն զբաղանքը, որոյ համար ևս իւր կենաց մեծագոյն մասն զոհած է: Հետաքրքրական է տեսնել այս արուեստին ընթացքը 'ի գնացս դարուց, որոյ առաջին գործի եղած է՝ նախնի եզրիպտական քնարն, և որոյ մէկ օրինակն լուսնութան գարանը պահուած է, և հետզհետէ փոփոխուելով այժմ համայնատարած դաշնակի վերածուած է, որոյ զանազան կատարելագործութիւններ չեն դադրիր յերևան գալու: Կարծես թէ ընդարձակ երաժշտութեան հանդիսի մը ներկայ պիտի ըլլաս այս սրահիս մէջ մշտնելովդ. բայց չես ուշանար անդրադառնալ խաբուելուդ վրայ, տեսնելով որ իւրաքանչիւր արուեստաւորն կամ գործատան ներկայացուցին պէսպէս եղանակներ կը զարնէր իւր այցելուաց առջև՝ իրեն գործուոյն կատարելութիւնը ցուցնելու համար: Կանգ կ'առնուս զարմացմամբ նորագիւտ դաշնակի մ'առջև, որոյ երկկարգեան ստեղծունքն միանգամայն դաշնակի և լութակի ներդաշնակութիւնը կը հնչեցնեն. կը տեսնես առնթիւր գնողայ կամ նորը յանձնողաց անուանց երկաշարք մը, 'ի ցոյց գործոյս համակրական ընդունելութեանն՝ 'ի մասնաւորի Ամերիկացի այցելուաց մէջ:

Երագաթ առիչ անկնարկով մի անցնինք անդամազնութեան առարկայից առջևէն, որոց երևոյթն և վիրաբուժական գործեաց տեսիլն թէ պէտ կրթական և հետաքրքրական՝ այլ կարծես մարդու խեղճութեան տխուր ազդեցութիւն մի կընէ վրայ. և կանգ առնուք առ վայր մի նախապատմական վերանորոգ նիւթոց և առարկայից առջև, ուր կը տեսնուի արդի պատմական գիտութեան յառաջադիմութիւնն՝ մէկ ոսկորէ միայն դատելն նախալրհեղեղեան կենդանւոյն ինչ մեծութիւն և ձև ունենալը, և զայն բովանդակ շինելը: Ճարտարապետական մասն ոչ ինչ նուազ հետաքրքրական է. ուր պարզ և գեղանի, ծանրակերպ և վսեմ արարուածքը ի հանդէս բերուած են. մէկ նայուածքով կ'ընդգրկես մեծամեծ շէնքերու օրինակքն, շիրիմք և տապանք մեծամեծ արանց հնոց և նորոց դարուց ըստ ազգաց սզգաց ճաշակի և աշխարհաց սովորութեանց, յունական, գոթացի, հռոմէական ճարտարապետութիւնն մինչև 'ի վերանորոգութեան սճն: Յաջորդող սրահքն զանազան արուեստից կը պատկանին. զոր օրինակ ապակեգործութեան, լուսանկարչութեան, դանակագործութեան, իւրաքանչիւրին վերաբերեալ գործեօք և արտագրութեանց հանդիսին. այլ և կը զգաս անդէն որ բարձրագոյն դասու արուեստից համաժող.

ղով կեդրոնի մը կը մերձենաս, որոյ տեսիլն և ևս փափաքելի կը լինի քեզ: Իրօք՝ հասած ենք կեդրոնական հոշակուտը Սրահը:

Այս սրահս Արուեստահանդիսին կենսական և ճոխագոյն մասն է: Փռահեցող գմբէթ մը՝ Բարմայի գմբէթին հաւասարահեղաձիգ՝ ի մուտս իւր կ'ամբառնայ: Այլ ու ահեակ Gobelins և Beauvais տէրութեան գործատանց գորգերն կը զարդարեն զորմունս, որոց վրայ Edison ի հզօր և ընդարձակ ճրագարերանք կը լուսաւորեն ՚ի գիշերի: Խոյա, կաց ծաղկանց փունջերու մէջ՝ արուեստից ծառայեցուցած բնութեան չորս զլխաւոր գորութեանց նշանադրոյքն դրուած են, շոգւոյ, ելեկտրականութեան, օդոյ և ջրոյ. և մէջերնին ունելով այլ չորս գլխաւոր արուեստից նշանքը՝ ճարտարապետութեան, արձանագործութեան, երաժշտութեան և նկարչութեան: Տասնեմէկ մէդր բարձրութեամբ՝ լայն պատշգամ մի գմբէթին չորս կողմը պտոյտ ընելով՝ մէկ նայուածքով ընդգրկել կուտայ քեզ յիսունևհինգ մէդր բարձր և ընդարձակ սրահիս ակնախտիդ միւսիոնից ճոխութիւնն, նկարուց գոյներուն կայտառութեան հետ, որոյ զլխաւոր նկարն կը ներկայացնէ ամէն ազգաց դիմելն յԱրիսեան դաշտն. մեղմ և ոսկեփայլ լոյս մը կ'իջնէ վրանին կողմնակի պատուհաններէն:

Սրահք մեծ և փոքր ամենուտ կը կեդրոնանան աստ: Մտագոյնքն՝ այսինքն որոնք նախապատուութեան համար ՚ի մուտս Մեծ սրահիս զետեղուած են, ոսկերչութեան և ականց սեպհականեալք են: Երկու մեծամեծ դրունք թափծու պղնձոյ կը մտցնեն այս հանդիսիս մէջ: Առասպելախառն պատմութեանց աշխարհը կը թուիս մտնել՝ յորում երկինքը յակնթէ է, ծաղկունք տպագիտն՝ զմրուխտէ թերթիւք, և ակադեայ ժայռք ադամանդի առուակներ կը հոսեցնեն: Անցեալ աշխարհահանդէսք, ինչպէս կ'աւանդուի, ականց և անգին քարանց այդպիսի ճոխութիւն տեսած չեն: Զարդասիրաց նշանաւոր ժողովատեղին է, ուրանօր ապակեփեղկ գրորցաց մէջ սպիտակ սնդուսի կամ կարմրագոյն թաւշի վրայ զետեղուած են միլիոնաւոր արժէքով ոսկեղէն զարդարանք, ակունք և քարեր, մանեկաց, ապարանկից, օղերու, անօթոց և տփոց վրայ ազուցուած երփներփեան, մթագոյն, վարդագոյն, կանաչ և ճառագայթաւէտ լուսով: Առանձին դարան մը աշխարհիս մեծագոյն ադամանդի միոյն սեպհականուած է որ 180 քարազ մեծութիւն ունի. չորս ադամանդք միայն կը գերազանցեն քան զայս մեծութեամբ, և են. Ռաճայն, Մեծ Մողղը, Գոսիւնուրն և Օրլոֆը: Ուրիշ գզրոցի մը մէջ 162 գարեհատ մեծութեամբ մարգարիտ մը կը ցուցուի: Նշանաւոր է ևս Գաղղիոյ թագին պատկանող զանազան ցրուած ակունքն, Մարիամ Լեքսինսքա թագուհւոյն յակնթէ մանեակն, և այլն, և այլն:

Դիտենք ևս ոսկւոյ և արծաթոյ ճոխութիւնն, զանազան նրբագործ շինուածք, որպիսի են սպասք, պէսպէս անօթք, սկիհք, շղթայք,

մանեակք, ապարանջանք, և անցնինք յախճապակեայց մասն, որ ի բննց փաշտիլուն, հազար ու մէկ քմահաճոյ ձևերովն, զանազան ընդարձակ սրահներ կը լինեն: Յախճապակիք, սեղանոյ սպասք, ծաղկամանք, բիր երևակայական ձևովք, յորս ոսկին և գունոց ներդաշնակութիւնն անմասն գեղեցկութիւն և փափկութիւն կ'ընծայեն, կը շլացնեն զաչոք: Կը սիրես մնալ անդ և մի առ մի համրել այդ շնորհալի ձեռագործները, նման ծաղկազուարճ ճեմելեաց՝ ուր իւրաքանչիւր ծաղկի դիմաց կանգ կ'առնու մարդ: Սպիտակ յախճապակեաց դասուն մէջ՝ նշանաւոր 'ի դուրս կը ցատկին Սէվրի գործատան շինուածքն և ձեռնական ճոխ գործուածքն: Միւսինոնք՝ որոց գերազանցութիւնն մինչև ցարդ իտալիոյ պահուած էր, այժմ՝ Գաղղիոյ և Եւրոպիոյ վաճառական ազգաց հասարակաց օժիտ եղած՝ կը մրցին փորոքնտիոյ զատիկանու և Ս. Բեղերսպուրկի գործուածներուն հետ: Զարմացմամբ կը դիտեմ զիցուհոյն աղբիւրն և պատուհանի ապակի մը, որ մարուր և անբիծ և ամբողջն միակտուր՝ S. Gobain ի գործատան մէջ շինուած 27 մէդր քառակուսի մեծութեամբ:

Կը յառաջես ակամայ՝ կերպասուց սրահը մտնելու համար: Աշխարհիս ամէն կողմէն 'ի Գաղղիա հաւաքեալ և 6, 700,000 գործեաց տակէն զտուած կերպասուց օրինակքն աստ հաւաքուած են: Նշանաւորագոյնք են Lyon և Rouen: Միտաքսի աշուուութիւնն և երանգոց կայտառութիւնն մասնաւորապէս կը դրաւեն զքեզ: Կայ՝ անդ մետաքս՝ մէդրն 3 ֆռանգ արժողութեամբ մինչև 'ի 500 ֆռանգ. և դժուարին չէ քեզ հաւատալ, որ Lyon քաղաքին տարեկան արտադրութիւնն չորս հարիւր միլիոն ֆռանգ է: Եկեղեցական զգեստուց մասնն նշանաւոր տեղ մը բռնած է, իրենց ոսկեթել բանուածքներով և զարդերուն ճաշակովն: Անդին S. Etienne ի ժապաւէններն, որոյ սեփական գործուածն և վաճառականութիւնն վեց դարէ հետէ կը տեւէ իւր հակառակորդ Պաղիլէայի, Յուրիքի և Բաղդերսոնի մրցանօքն հանդերձ, և կը շարունակէ իւր առաջնակարգ աստիճանը պահել՝ ճաշակին և նորաձեւութեան համար: Իւր նշանաւոր ցոյցն զարգարուած է մասնաւորապէս գոյնզգոյն սնդուսի տեսակօք, որոց վրայ փափկութեամբ սիրուած են ծաղկունք, ևս և իւր թաւէ գործուածներովն, որոյ տարեկան արտադրութիւնն հարիւր միլիոն է:

Յաջորդող սրահք՝ զգեստեղինաց հաւաքածոյքը կը բովանդակեն: Տիկնանց բազմութիւնն մանրամասնաբար կը դիտեն իրենց սիրելագոյն ժողովատեղին, քննելով իւրաքանչիւր առարկայն, իւր շինուածքին, ձևոյն, ծաղուածոց, բանուածքներու, և զլիտադրին հազարումէկ ձևոյն, ծաղկանց վրայ և այլն, խորհրդածելով: Աստ գեղեցկութեան դատաւորն՝ ճաշակն է: Ու նոյն քննողական ակնարկը ձեռքելով վարագուրածիգներու, ծածկոցներու և տնական պէսպէս լաթերու վրայ՝ կը յառաջեն լընդարձակ սրահին, ուրանօր կահկարա-

սեաց ցոյցն է, որ իւր ճոխութեամբն կրնայ տարօրինակ և եզական համարուիլ: Պարզ և արքայավայել կհաք հոս հաւաքուած են. անկողինք, բազմոցք, սեղանք, գգրոցք, գրասեղանք, գրատունք, որոց ճաշակն զուգեալ է փորագրութեան ճարտարութեան հետ, կարգ մը սրահից մէջ սփռուած են. յորոց իւրաքանչիւրն զուցէ համարուի պաշտան մը կարգաւ սենեակներ յորս գունոց զանազանութիւնն դիտուած է, որ պահանջմանց համապատասխանէ, և ըլլայ մին՝ իսպառ սպիտակ սնդուսէ, միւսն վարդագոյն մետաքսէ, ուրիշ մը վենետկեան մթնագոյն կանաչ, ուրիշ մը արեւելեան ճաշակաւ և այլն, տանը ճոխութեան և զուարթութեան համար:

Մերձաւոր սրահն՝ որմոց թղթերու ցոյցն է, որ հետուանց թաւչի և մետաքսի գործուած կը կարծուին ըլլալ, և միայն շոշափելոյն կարելի է ստոյգը իմանալ, այնչափ ճշդութեամբ շինուած են լիւնի մետաքսի և անդուսի և ճենովայի թաւչի նման: Պղնձի գործարաններու մասն յաջորդելով կը վերջնայ կահկարասեաց հանդէսն: Ճրագակալք պէս պէս մեծութեամբ, կանթեղք, կանթեղակիր բազուկք, արձանք և արձանիկք, մեծամեծ ծաղկանօթք և սափորք սենեկաց համար, սանդղոց բազրիք, զանգակք և զանգակիկք և այլն, օգտակար կամ զարդարանաց ամենայն շինուածք կը տեսնես հոս, միտրագոյն փայլուն ջնարակի գունով. որմէ վերջը կը յաջորդէ երկաթեղէն մասն, իւր անուօք, սիւնակներով, մրձօք, մանգաղօք, հրադիւնուք, թնդանօթօք, միով բանիւ, հարուստ գործատուն մը՝ յորում գամէ մի սկսեալ մինչև երկաթաչէն նորահնար տան ամենայն կարեօրք՝ ի տես դրուած են: Նշանաւոր են ևս երկրագործական նորահնար ինքնաշարժ հնձողք, աղբ ցանող, սերմն ցանող, խոտ կտրող մեքենայք, և ցորեն ծեծող գործիք կատարելագործեալք: Գլանաձև գործի մը՝ ցորենի խոշոր, միջակ, և պզտիկ հատիկները կը զատէ առանձին առանձին՝ աւելորդ եկամուտ նիւթեր դուրսնետելէ յետոյ:

Մեքենայից սրահը չմտած՝ դիտենք Poussielgue գործատան տասն, և մէկ մէկը բարձր և վեց մէկը լայն գոթաձև հռչակաւոր ոսկեզօծ պղնձէ մեծ խորանն, Rouen քաղաքի S. Ouen եկեղեցւոյն համար յանձնուած. գարձեալ Ստեփանոս Մարսէլի (Etienne Marcel) թափժու արձանն, որուն վրայ ամենեին ձեռք դպցուած չէ, այլ կաղապարէն ելած հոս փոխադրուած է Thiébault տանն ձուլարաններուն ճշդութիւնը ցուցնելու համար:

Հասած ենք արդ մարդուս գործունէութեան հրաշալիեաց դիմաց: Հարիւր տասնհինգ մէկը լայն, չորս հարիւր մէկը երկայն, և քառասունհուր մէկը բարձր սրահի մը մէջ, որ փարիզու յաղթական կամօրն և վանտոմի կոթողն իւր կամարաց տակ կրնայ ամփոփել: Մեքենայից այդ հսկայագործ շտեմարանին ընդարձակութիւնն է 80, 400 քառակուսի մէկը, յորում 30, 000 զինուորաց բանակ մը և 12

կամ 15,000 ձիոց խումբ մը դիւրութեամբ կրնայ պատսպարուիլ, Նորակերպ կամարաց վրայ կը հանդչի առաստաղն՝ որք ուրիշ յենարան չունին բաց իրենց խարսխէն: Իւրաքանչիւր կամարն 200,000 հազարագրամ կը կշռէ: Երեսուն և երկու մայր գործիք՝ աստի տես դրուած ամէն գործիքներուն շարժում կու տան. 'ի գիշերի' հզօր լուսաշնորակ մը սրահիս միջովայրը կանգնած կը լուսաւորէ. իւր լյան ստանալով մագնիս-եղկարաշարժ գործիքէ մը, որոյ անուոյն երազութիւնն է 1,500 պտոյտք է:

Այցելուն երբ առաւօտեան կը մտնէ այս սրահիս մէջ, լուս զինարանի մը կամ երկաթոյ գործատան մը գաղափարն կունենայ որ դադարման մէջ է: Ժամը տասնուամէկին յանկարծ սուլիչ գործի մը իւրաւոր ձայնը կ'արձակէ, և մէկ վայրկեանի մէջ հազարաւոր մեքենայք տեսակ տեսակ պտոյտներով և խլացուցիչ աղաղակաւ կը սկսին գործել: Այն ժամուն հետաքրքրական է սրահս, և ժամանակ ունեցողըն զանց չընէր կանգ առնելու աւելի կամ պակաս երկայն ատեն՝ այս կամ այն գործւոյն զիմաց, և դիտել հետաքրքրութեամբ անոր շարժումը և գործն: Տեղւոյս սակաւութիւնն կը հարկադրէ զմեզ նշանաւոր գործեաց անունն և եթ թալու. այսպէս օրինակ իմն, հելուետական ջրաբաշխական պտուտակաձև անիքն, բամբակի և մետաքսի մանելու գործիքներն, շոգեշարժ մայր գործիքն իրենց 1000 և 1,500 ձիոց զօրութեամբը. Oerlikonի ելեկտրաձին մեքենայքն, Յուրիքի ազօրիքն, Es-cher Nyssի թղթարանն, Պելճիոյ Cockerillի շնչատու գեղեցիկ գործիքը, որ օգոյ հեղեղներ կը խաւրէ ամխահանաց խորութեան մէջ աշխատողաց. Verviersի մանարանաց հուշակաւոր գործիքներն, Միացեալ-Նահանգաց խոշորաձև բայց ընտիր մեքենայքն. Edisonի ելեկտրական շարժիչն, որ ինքն իրեն համար 675 մէդր տեղ գրաւած է և 20,000 կանթեղզք լուսաւորուած է. հոս կը տեսնուի նաև անոր համբաւաւոր ձայնազրուկան գործին, որ զաշխարհս զարմացուց. միով բանիւ՝ այցելուն կը տեսնէ հոս Edisonի նախնական գիւտէն մինչև իւր այսօրուան կատարելագոյն գործին, ֆիչ մ'անդին Bellի հեռագիրն, Elibu-Thomsonի նշանաւոր Մահմետի գերեզմանն, որ տասնհինգ հարիւրորդամէդր տրամագծով թափծու պղնձէ օղակ մ'է յօդս առկախեալ ինքնիրեն մագնիսի ձգման զօրութեամբ: Գաղղիոյ Darblayի թղթագործարանն, որ զօրաւոր մրցողն է Պելճիոյ Nayer գործարանին, ուր աչքիդ տակ կը տեսնես մէկ կողմէն թղթոյ շինութեան ծառայող նախնական զանգուածն և հետզհետէ զանազան գլանից ներքեէն անցնելով գեղեցիկ սահուն թուղթ եղած՝ մերձակայ տպագրատան մէջ օրաթերթ տպուած այցելուաց բաշխուիլն: Marinoni և այլոց տպագրութեան գործիքն, մանր կտորներով շինուած և աւելի զօրաւոր եղած աղօթեաց երկանքն, Savalle տանն հեղանիւթոց զտարանքն, Fives-lilleի

չաքարի գործարանն և մշակութեան զանազան նորեղուկ գործիքն-
րըն: Բիչ մ'անդին հանքերու աշխատութեանը ծառայող մեքենայք,
յորս և նորահնար կառատորմ մը, որ ելեկտրականութեամբ լուսաւո-
րուած հանքերն անգափոխելու կը ծառայէ: Չմոռնանք յիշելու ևս
մամի, կարի, արևելեան նմանութեամբ կապերտ և գորգ շինելու
զանազան գործիքներն, և գաղափար մի կ'ունենամք յայնժամ աշ-
խարհի մը հարստութեան, որոյ սկզբնապատճառն է գործեաց ճշդու-
թիւնն և ժամանակին վաստակը:

Շարունակելի

Հ. Գեորգ Պաթեւ

ԹԱՆԳԱՐԱՆ ԾՕՇԱՍՏԱՆԻ



Շօշափտանի թանգարանին սրահք 'ի մօտոյ արեւի ևս պիտի ճոխա-
նան՝ Դարեհի պալատան մէջ գտնուած առարկաներով: այս իրաց
ամենամեծ կարևորութիւնը իմանալու համար, կը դնենք աստ հե-
տեեալ նկարագրութիւնը՝ զոր կ'առնումք Տիէօլաֆուայի սոյն առ-
թիւ ըրած բանախօսութենէն:

« Արբունի ապարանքն 17—18 մէդր բարձրութեամբ գրեթէ ուղղանկիւն
սարահարթ հողաբլրոյ մը վրայ կ'ամրառնայր, արևելեան և արևմտեան կող-
մերէն շրջապատեալ բարձր պարսպօք: Հիւսիսակողմեան պարսպաց գագա-
թըն հաւասար էր պալատան միահարթ տանեաց, ուստի և թագաւորն իւր
քնակարանին սեմէն կ'ընդգրկէր միով հայեցուածով բովանդակ Բակ-
տրեան լեռանց շղթայն, զաշտագետիւր և Շօշ քաղաքը: Ապագանայի սա-
րահարթին հարաւակողմն՝ ելամական կոչուած գերեզմանարդոյն և ամրոցին
մէջ գտնուած զինուորական հրապարակին մի մասը կը կազմէր: Զինուո-
րական հրապարակին գլխաւոր մուտքը՝ գահուն սրահին մէջ էր, արևե-
լեան կողմը և ամրոցին պարսպաց ստորոտը:

« Առանց ուշադիր լինելու Դարեհէն առաջ կառուցեալ կողմնակի շէնքե-
րուն, մտոյ այն գունէն և դէպ յԱրտաշիսի պալատը ուղղեցի իմ քայլերս:
Հոս սոցեւելին տշաց առջև հսկայածե սանդուխ մը կը ներկայանայ: Այս
սանդուխս կը գտնուէր սքեմենեան սարահարթին հարաւային կողման կեդ-
րոնը, որոյ կողմնակի մասերն պարսպաց վրայ կը հանգչէին՝ հաստատեալ
կրկին աշտարակաց վրայ: Թախթէ — շէմիտի սանդղոց նման՝ կը բաղկանայր
և այս շարս աստիճաններէ կրկին բաժանմամբք: սանդղոյն ատամնածե ձեւն-
ընթացիկք՝ Լուվրի առաջին սրահին մէջ 'ի ցոյց դրուած հրաշալի յախճապա-
կօք ազուցեալ են: Այնքան դիւրեւանելի էին սանդղամատուներն (որոց զատ
'ի վերն է 23 սանթիմէդր՝ իւրարանչիւր մէդրին վրայ) որ կարելի է ձիով
իսկ վեր ելնել: և ասպ կը հասնէին 'ի գաւիթն որ արևելեան և արևմտեան
կողմերէն պարսպապատ էր: Սրահքն՝ մտացածին կենդանեօք զարդարեալք՝
թեոց կեդրոնավայրը կը գրաւէին. սանդղոյն դէմ ընդ դէմ լայն խորը մը կը
բացուէր, որ Պերսեպօլսոյ Ախտապոյու կամարակապ սրահին դրանց նման